Հրապարակման ենթակա է

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019 թվականի մայիսի 16-17-ը
ք. Մոսկվա /Ռուսաստանի Դաշնություն/ գործուղման
արդյունքների մասին

1. Անուն, ազգանուն.
Ալբերտ Բաբայան

2. Զբաղեցրած պաշտոնը.
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.
ք. Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2019 թվականի մայիսի 16-17-ը

4. Հրավիրող կողմը.
Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախաձեռնությամբ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).
Միասնական ձևերով տրված համապատասխանության սերտիֆիկատի և համապատասխանության հայտարարագրի՝ համապատասխանության պարտադիր գնահատման ենթակա արտադրանքի միասնական ցանկում փոփոխություններ կատարելու հարցով Եվրասիական տնտեսական անդամ պետությունների իրավասու պետական մարմինների ներկայացուցիչների խորհրդակցությանը մասնակցելու նպատակով

6. Քննարկված թեմաները.
Խորհրդակցության ժամանակ քննարկվել է ցեմենտի մասով միասնական ձևերով տրված համապատասխանության սերտիֆիկատի և համապատասխանության հայտարարագրի՝ համապատասխանության պարտադիր գնահատման ենթակա արտադրանքի միասնական ցանկում փոփոխություններ կատարելու նպատակահարմարության հարցը:

Վերոնշյալ առաջարկի նախաձեռնող կողմն է հանդիսացել Բելառուսի Հանրապետությունը: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի «Միասնական ձևերով տրված համապատասխանության սերտիֆիկատի և համապատասխանության հայտարարագրի՝ համապատասխանության պարտադիր գնահատման ենթակա արտադրանքի միասնական ցանկում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի նպատակն է մինչև «Շենքերի և շինությունների, շինարարական նյութերի և արտադրանքի մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի ընդունման և ուժի մեջ մտնելու անցումային ժամանակահատվածում ԵԱՏՄ անդամ պետությունների տարածքում ցեմենտի ազատ շրջանառության հնարավորության ապահովումը:

Խորհրդակցության ժամանակ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախագահ Տ.Սարգսյանի կողմից նշվեց, որ անհրաժեշտ է ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսվարող սուբյեկտների համար հավասար պայմանների սահմանման այնպիսի մեխանիզմ մշակել, որի միջոցով կիրականացվեն շինարարության մեջ կիրառվող ցեմենտի փոխադարձ մատակարարման և համապատասխանության գնահատման գործընթացները:

Ռուսաստանի Դաշնության արդյունաբերության և առևտրի նախարարի տեղակալ Վ.Եվտուխովը հայտնեց, որ ռուսական կողմը պատրաստ է աջակցություն ցուցաբերել ԵԱՏՄ անդամ պետություններում ցեմենտ արտադրողներին, առանց ՌԴ օրենսդրությանը

համապատասխան գրանցված իրավաբանական անձի ստեղծման անհրաժեշտության, ցեմենտի համապատասխանության գնահատման համար ՌԴ սերտիֆիկացման մարմիններում որպես հայտատու ներկայանալու հարցում: Նշված առաջարկը հավանության արժանացավ ԵԱՏՄ անդամ մյուս պետությունների ներկայացուցիչների կողմից:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովում ս/թ մայիսի 16-ին կայացած նիստի ընթացքում հայկական կողմից առաջարկվել է քննարկման առարկա դարձնել Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի «Միասնական ձևով համապատասխանության սերտիֆիկատների և հայտարարագրերի տրամադրմամբ համապատասխանության պարտադիր հաստատման ենթակա ապրանքների միասնական ցանկի մասին» №620 որոշման մեջ համապատասխան փոփոխության իրականացման հնարավորության հարցը՝ վերոնշյալ արտադրատեսակների ցանկում ավելացնելով «կապի միջոցներ» ապրանքային խումբը՝ ներառելով համապատասխան ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերը և միաժամանակ նախատեսել այնպիսի դրույթ՝ համաձայն որի Հայաստանի Հանրապետությունը կարող է միանալ վերոհիշյալ որոշմանը առաջարկվող փոփոխության մասով:

Ս.թ. մայիսի 17-ին Ռուսաստանի Դաշնության թվային զարգացման, կապի և զանգվածային հաղորդակցության նախարարի տեղակալ Մ. Մամոնովի հետ կայացած հանդիպման ընթացքում քննարկվել է նաև Ռուսաստանի Դաշնությունում կապի միջոցների համապատասխանության սերտիֆիկատի ձևակերպման լրացուցիչ պահանջի /հայտատու կարող է հանդիսանալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ գրանցված իրավաբանական անձը կամ անհատ ձեռներեցը, որն ապահովում է ներմուծվող կապի միջոցների համապատասխանությունը սահմանված պահանջներին/ մասով առաջացած խոչընդոտը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ս/թ մայիսի 16-ին կայացած խորհրդակցության ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել առ այն, որ հայկական կողմը կմշակի և համապատասխան առաջարկություն կներկայացնի համապատասխանության պարտադիր հաստատման ենթակա արտադրանքի միասնական ցանկում կապի միջոցների ներառման մասով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ռուսաստանի Դաշնությունում կապի միջոցների համապատասխանության սերտիֆիկատի ձևակերպման լրացուցիչ պահանջի մասով, որպես հարցի լուծման միջանկյալ այլընտրանքային տարբերակ առաջարկվել է կապի միջոցների համապատասխանության ավելի մատչելի սերտիֆիկացման գործընթացի իրականացումը՝ Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության առևտրային ներկայացուցչի իրավասություններ ունեցող ընկերությանը որպես հայտատու ներկայացնելու միջոցով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարի տեղակալ

Ալբերտ Բաբայան

22.05.2019 թ.